ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3380-Ա « 07 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
16-Ի Հ.5689-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով՝

1. Երևան քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 16-ի «Երևանի Ա. Միկոյան փողոցի հ.21 շենքի հ. 30՝ 25,72քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» հ.5689-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 19.04.2011թ. հ.2527357 վկայական), ք.Երևանի Ա.Միկոյան փողոցի հ.21 շենքի հ.30՝ 25,72քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ Կոլյա, Գուրգեն, Գոհար, Ալվարդ Գրիգորյաններին և Ռիմա Բարսեղյանին (5 անձ, այսուհետ նվիրառուներ)՝ որպես ընտանիքի բոլոր անդամների համատեղ սեփականություն:»:

2.Լիազորել Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուների հետ կնքել բնակարանի նվիրատվության մասին պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ